

ՏԱՐԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Տարին այն ժամանակամիջոցն է, որի ընթացքում երկրագունդը մեկ լրիվ պտույտ է կատարում արեգակի շուրջը:

Հայերը վաղնջական շրջանից հիմնավորված ու ճշգրիտ տոմարագիտական տեղեկություններ են ունեցել, եղել է նաև բուն հայկական տոմար¹, և որ այդ համակարգում **տարին** (արևադարձային կամ լուսնային) կարևոր դեր է խաղացել, վկայում են ոչ միայն օրացուցային ճշգրիտ հաշվարկները, այլև **տարի** հասկացության հ.-ե. անվանումը՝ **ամ**, նաև **անցյալ տարի** հասկացության առկայությունը դարձյալ հ.-ե. անվանումով²:

Նոր հայկազյան բառարանը **ամ**-ը մեկնում է՝ «Տարի, ժամանակ ԺԲ ամսոց արեգական, հասակ կենաց մարդոյ, չափ ժամանակի երևելի իրաց», իսկ **տարի**-ն՝ «ամ, բոլորումն երկուտասան ամսոց»³: Ըստ Առձեռն բառարանի **ամ**՝ «տարի, տարիք, թուական»: Տարի՝ «տարիք»⁴: Գրաբարում **ամ** և **տարի** բառերը, ունենալով հոմանիշային եզրեր, նաև զգալի գործառական, բառակազմական և այլ կարգի յուրահատկություններ են դրսևորում:

Անդրադառնաք մշված բառերի հետ առնչվող մի քանի հարցերի:

ա) **Գործածության հաճախականություն**

5-րդ դարի թարգմանական անենածավալում գործում՝ Աստվածաշնչում, Աճառյանի հաշվումներով **ամ**-ը գործածվել է 581 անգամ, իսկ **տարի**-ն՝ 66⁵: Ինքնուրույն գրականության տվյալները նույնպես հաստատում են, որ **ամ**-ը ավելի հաճախական է, քան **տարի**-ն: Տվյալները ներկայացնենք աղյուսակի տեսքով⁶:

	Հեղինակ	ամ-ի գործածությունը (թվերով)	տարի-ի գործածությունը (թվերով)
1.	Կորյուն	13	0
2.	Եզնիկ	14	8
3.	Ագաթանգեղոս	38	6
4.	Բուզանդ	45	1
5.	Նդիշե	28	3
6.	Խորենացի	170	4
7.	Փարպեցի	31	1

Ամ-ը հաճախական է և հետիհինգերորդդարյան գրականության մեջ, օրինակ՝ Հ. Դրախսանակերտցու «Պատմության» մեջ **ամ**-ի գործածությունը անցնում է

100-ից, իսկ տարի բառ հեղինակը չի գործածել: Այն չկա և Նարեկացու «Մատյան»-ում⁷:

բ) **Ծագումնաբանական յուրահատկություններ**

Ամ-ը բնիկ հայերեն բառ է: **Տարի**-ն Արմ-ում ստուգաբանված չէ. Գ. Ջահուկյանը հավանական է համարում սեմական ծագումը⁸: Ուրեմն **ամ**-ը հայերենում գործածության հիմնականում ունի, իսկ տարի-ն գործածվել է ավելի ուշ:

գ) **Բառակազմական յուրահատկություններ**

Ամ և տարի բաղադրիչներով գրաբարում կան մի շարք կազմություններ: Եթե վերջիններիս քանակական կողմը կարող ենք այնքան էլ էական չհամարել, ապա բառակազմական կաղապարների և բառածների հարցը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում:

Նախ՝ նկատելի է, որ **ամ**-ով կազմությունները գրաբարում ավելի շատ են, այդ բաղադրիչով գրաբարում կան **ամանոր**, **ամամեջ**, հետադաս դիրքում՝ **քազամենայ**, **հնամի**, **զառամ** նաև **թվական + ամ** մի շարք կազմություններ. **երկեամ**, **երեամ** (հրեմոյ), **եռամենայ**, **չորեքամենայ**, **հազարամենայ**, **հարիւրամենայ**... և այլն:

Տարի բառով առկա են **տարեկան**, **տարեմուտ**, **տարեւոր**, **տարեզուլիս**⁹:

Տարի-ն որպես բառի վերջին բաղադրիչ գրաբարում վկայված չէ: Ուրեմն՝ **ամ**-ի բառակազմական հնարավորությունները ավելի մեծ են: Բառածներում ի հայտ է գալիս մի այլ առանձնահատկություն ևս. **ամ** բառով կազմությունները հատկապես նախադաս դիրքում հնագույն ձևեր են և թերևս կազմված **ամա** հիմքով: Բնութագրական է **ամանոր**-ը, որտեղ, եթե **ամ+ա+նոր** (ա-ն որպես հոդակապ) կազմությունը չէ, ապա գործ ունենք **ամա** (հիմքային ձև) + **նոր** կաղապարի հետ: Գ. Ջահուկյանը նույնպես հիմքային ձևի առկայությունը ավելի հավանական է համարում, նկատելով, որ «սա խոսում է կազմության արխայիկ բնույթի մասին (հմմտ. վիպասանական աչագեղ)¹⁰: **Ամ**-ի վերջադաս դիրքում էլ, որոշ կազմություններ՝ **երեամ**, **երեմի**, **երկեամ**, անշուշտ հիմնական են:

Ամանոր բառը ՆՀԲ-ն չունի, իսկ ԱԲ-ում կա՝ «Նոր տարի, տարեզուլիս» բացատրությամբ: Քանի որ ԱԲ-ն բնագրային օրինակներ չի բերում, ուստի չենք կարող որևէ բան ասել նշված իմաստների գրավոր փորձառության ժամանակաշրջանի մասին: 5-րդ դարում, ըստ բառարանների և համաբարբառների տեղեկության, **ամանոր** բառը օգտագործել է Ազաթանգեղոսը, բայց այն թերևս դիցանում է և այդ պատճառով էլ տեղ չի գտել ՆՀԲ-ում: Ահա այդ օրինակը. «Ջիշատակս վկայիցն ... ժամադրեաց ի տօն մեծ հռչակել, սնոտիացն պաշտաման ի ժամանակի՝ դիցն **Ամանորոյ** ... նոր պտղոց տոնին» (Ազաթ. 435): Առհասարակ ժամանակի միավորների անվանում-դիցանումն աղբյուր առկա է հայկական տոմարում. հմմտ. հետևյալ օրանունները, **Աստղիկ**, **Միհր**, **Արամազդ**, **Ամսիիտ**, **Վսեհագն**:

դ) **Գործառական յուրահատկություններ**

Քննության առարկա **ամ** և **տարի** բառերի ծագումնաբանական, բառակազմա-

կան, հաճախականության առանձնահատկությունները, անշուշտ պայմանավորում են դրանց կիրառության ոլորտները: Փորձենք տարբերակել այդ սահմանները, իմաստային նրբերանգները:

Հ. Աճառյանը, հաշվի առնելով Ա.Մեյեի այն նկատառումը, թե հին հնդկերկրագիյները տարբեր անվանումներ ունեին մի տարվա և մեկից ավելի տարիների համար, ենթադրում է, որ այդ տարբերությունը կա նաև **ամ** և **տարի** բառերի միջև. «Տարի նշանակում էր «մի տարի», ամ՝ տարիներ: Այս տարբերությունը Ե դարուց առաջ արդեն ջնջված էր: Ոսկեդարում **ամ** և **տարի** բառերը կատարյալ հոմանիշներ էին, մինչև որ **ամ** բառն էլ ջնջվեց և մնաց միայն **տարի**»¹: Որպես փաստարկի հիմնավորում Աճառյանը նշում է, որ Ա.Գրքի՝ **ամ**-ի 581 կիրառություններից 278-ը հոգնակի է, 65-ը հոգնակի իմաստով (վեց ամ, զիազար ամ) և 198-ը՝ եզակի: Իսկ **տարի** բառի 66 գործածություններից միայն երեքն է հոգնակի²: Նշենք, որ **ամ**-ի հոգնակիաձև կամ հոգնակի իմաստով կիրառությունը բնորոշ է նաև աղյուսակում բերված հեղինակների գործերին: Համադրելով **ամ** և **տարի** բառերի գործածությունները՝ կարող ենք արձանագրել, որ **ամ**-ը կիրառվում է.

1. *Մեկից ավելի, շատ տարիներ նշանակությամբ, և հանդես է գալիս 1-ից բարձր թվականների, նաև քազում, շատ, այնչափ և նման կարգի բառերի հետ.*

«Այս քսան **ամ** է, զի էի ընդ քեզ» (Ծննդ. ԼԱ. 38): «Էր **ամաց** քառասնից» (Բ. թագ. Բ. 10): «Այսչափ **ամք** են, զի տեսի ես քեզ» (Ազաթ. 30): «Կեցեալ **ամս** քազում» (որ. 244): «Եվ զայս խորհէր հատուցանել **յամս** ծիգս» (որ. 44):

2. *Դասական թվականների հետ.*

«Առաքեցից **յամին** վեցերորդի» (Դևտ. ԻԵ. 21): «Յամի երկրորդի ելանելոյ նոցա» (Ծննդ. . 15): «Եւ յաջորդէ զաթոռն Յուսիկ որդի նորին ի չորրորդ **ամին** Տիրանայ» (որ. 269): «Ի քառասուն և յեօթներորդ **յամն** Տրդատայ մինչև ցյիսուն եւ երրորդ **ամն** նորին» (որ. 243):

3. *Երբ նշվում է որևէ իշխանության, քազավորության կամ պատմական իրադարձության ժամանակը.*

«Յամի ութերորդի քազաւորութեան իւրոյ» (Դ.Թագ. ԻԴ. 12): «Յետ լնլոյ հնգետասան **ամաց** եպիսկոպոսութեան մեծի Վրթանայ...» (որ. 269): «...սկսեալ յերրորդ **ամն** վերջնոյ ոսրովայ արքայի Հայոց մինչև ցսկիզբն **ամին** երկրորդի Յազկերտի» (որ. 355): «... ութսուն **ամօք** յառաջ քան զքազաւորութիւնն են Նարուգողոնոսորայ էր Սենեքերիսն կացեալ արքայ Սաորեստամի» (որ. 70): «Յերկրորդում **ամի** յետ ցրիեղեղին» (Ծննդ. ԺԱ. 10):

4. *Երբ ցույց է տալիս մարդու տարիքը.*

«Եկեաց Ադամ **ամս** երկերիւր և երեսուն... » (Ծննդ. Ե. 3): «Շամուել կեցեալ **ամս** հինգ մեռանի ի մերում աշխարհիս» (որ. 349): «Եւ եղեն ամենայն ատուրք Յաքեղի **ամք** ինն հարիւր վաթսուն եւ երկու, եւ մեռաւ» (Ծննդ. Ե. 20):

Մարդու տարիք, հասակ նշելու դեպքում նույնիսկ կրկնությունից խուսափելու

համար **տարի** չի օգտագործվում, այլ միայն **ամ** (հմնտ. «Եւ ամբ կենաց Կահաթո՛ հարիւր երեսուն եւ երեք ամ» (Ելք. 2. 18): «Եւ այս ամբ կենաց Իսմայելի հարիւր երեսուն եւ եւթն ամ» (Ծննդ. ԻԲ. 17): Հունարենում նույնպես նույն «ετος(ε')τη» բառն է: Հայերենի դեպքում միայն հունարենի ազդեցությունը չէ, այլ գործ ունենք **տարի** բառի «տարիք» իմաստով՝ գրաբարում չգործառնելու երևույթի հետ: Ի դեպ ոուսերենի համապատասխան հատվածում՝ Ելք. 2. 18-ում, *лет* և *год* բառերն են. «А лет жизни Каафа сто тридцать три года»: Ռուսերենը կրկնությունից խուսափելու համար չի արել դա: Ռուսերենում *лета՝* և *год* բառերի՝ թվականների հետ կիրառության այլ կանոն է գործում, որի համաձայն էլ հենց Ս.Գրքի որոշ օրինակներում օգտագործվում է նույն բառը: Այդպես է Ծննդ. ԻԲ. 17 նախադասության մեջ. «Лет же жизни Измаиловой было сто тридцать семь лет»¹³:

Տարի բառը գործառնում է հիմնականում «օրացուցային տարի, տոմարական միավոր» իմաստով. «Եւ լուծան չորք հրեշտակքն պատրաստեալք ի ժամ եւ յօր եւ յամիս եւ ի ասարի ...» (Յայտ. Թ. 10): «**Տարին** կատարեցաւ և զարդիւնս ամենայն ի շտեմարանս ձեր ժողովեցեք» (Մաղա. Գ. 10): Եզնիկի երկի բոլոր 8 կիրառություններն էլ նշված իմաստով են. «Նա յերեսուն ատուր կատարէ զընթացսն և արեգակն ի տարւոջ» (215): «Որով ժամքն և ատուրք և ամիսք և տարիք կարգին» (119): «Որ ի տարւոջ հագիւ մի անգամ հասանեն ի նոյն տեղի ... և է որ ի տարւոջ և ի կիսում» (187): Այսպես են և որենացու վկայած օրինակները. բերենք երկուսը. «Չաբաթուց ասեմ և զամսոց և զտարեաց բոլորմանց» (188): «... Որպէս զշորորդ մասն ի բոլորմանէ տարւոյն, որ է ամառնային եղանակ, ըստ ամենայն բարեվայելչութեան անցանիցեմք ի Հայս ...» (151): Այսպես է և Բուզանդի վկայած միակ օրինակը. «Եւ նա ծածկեալ բռնացեալ ունէր զերկիրն առ հասարակ իբրև տարի մի» (15):

Տարի բառն նշված իմաստի բնորոշ օրինակ է «Վեցօրեայի» հետևյալ հատվածը. «Դարձեալ եւ ի տարիս եղան լինել արեգակն եւ լուսին, քանզի լուսին յորժամ երկոտասանիցս կատարէ զընթացս իւր տարի մի կատարի ... ըստ արինակի եբրայեցոց, որ կատարեն զընթացս ասարւոյն ի Հին կտակարանաց եւ ըստ արինակացն յունաց, որ ըստ թուոյ նախնեաց համարին զտարին արեգական ի հաստատել ի կիտէն մինչեւ ի միւս կէտն, նշանակել զընթացից շարժմանցն, զոր ունի արեգակն նոյնպէս առնի նաքալք կատարումն տարւոյն իւրոյ»¹⁴:

Տարի բաղադրիչով կազմությունները նույնպես տոմարական, օրացուցային հասկացություններ են. **տարեկան** «տարի, տարեմուտ, տարվա գլխավոր օր», **տարեմուտ** «նոր տարվա մուտքը, կադանդ», **տարեառ** «տարեկան, մեկ տարվա»:

Այսպիսով կարող ենք արձանագրել, որ **ամ** և **տարի** բառերը գրաբարում դրսևորում են գործառական յուրահատկություններ: **Տարի**-ն հիմնականում օրացուցային-տոմարական հասկացություն է, իսկ **ամ**-ը ավելի բազմիմաստ է և հաճախական, որը պայմանավորող կարևոր գործոնը **ամ**-ի հ.-ն. ծագումն է, այսինքն՝ նրա վաղնջական շրջանից գործածությունը:

Մի դիտարկում **ամ** արմատով մեկ այլ կազմության մասին: Գրաբարում տարվա եղանակների անվանումները հնդեվրոպական ծագում ունեն:

Ռատունասիրողները **ամառն** բառի մեջ տեսնում են հ.-ե. *som* արմատը¹⁵: Արդյոք **ամառն** բառի **ամ** բաղադրիչը նույն **ամ** «տարի» արմատն է, թե՞ այլ: Այլ կերպ ասած՝ գործ ունենք տարբեր (համանուն) արմատների հետ, թե՞ նույն արմատի իմաստային զարգացման:

Նախքան առաջադիր խնդրին անդրադառնալը, նկատենք, որ տարվա եղանակների շարքում իրականության մեջ հստակորեն հակադրված են ամառ-ձմեռ հասկացությունները և դա բնական է: Գրաբարում դրանք առանձնանում են և բառակազմական ընդհանրություններով. **ամառն** – **ամարան, ձմեռն** – **ձմերան**:

Ձմեռն բառի պարզական արմատն է *gʰei, *gʰi «սառնամանիք, ձմեռ», այս նույն արմատից է և հայ. **ձիւն** բառը: Հմտ. նաև սանս. *hemant* «ձմեռ», *hima* «ցուրտ, ձմեռ, ձյուն», պրս. *zam* «ցուրտ», *zamestan* «ձմեռ»:

Տրամաբանական է, որ **ձմեռն**–ը հակադրվող **ամառ** հասկացությունը պետք է արտահայտի «տաք, ջերմություն, շոգ» իմաստը. հմտ. պրս. *tabestan* «ամառ»:

Մեզ թվում է **ամառն** բառի **ամ** բաղադրիչը նույն **ամ** «տարի, ժամանակ» արմատն է: Նախ՝ գրաբարում էլ **ամ**–ը **տարի** իմաստից զատ եմթադրում է նաև «ժամանակ» իմաստը, հմտ. զառամ (*զ* – առ – ամ) «ծեր», այդպես էլ **տարիք** իմաստով կիրառությունները փաստորեն ժամանականիշներ են: Երկրորդ՝ հ.-ե. մի շարք լեզուներում էլ համապատասխան արմատը ունի և «ժամանակ», և «տարի» իմաստները. հմտ. սանս. *smta* «տարի, եղանակ, ժամանակ», զնդ. *hama* «ամառ» և այլն: Այդպես է և սլավոնական լեզուների *лето* բառը. հ.սլավ. *лѣто* «ժամանակ»: Տարի, տարվա եղանակ զուգահեռներից է և իր. **sarda* «տարի», հ.հնդ. *sṛṣṭ* «աշուն»¹⁶, հուն. *θερος*–ը նշանակում է «ամառ» և «բերք, հունձ»¹⁷ Վերջինիս դեպքերում կարելի է ենթադրել «բերքի, հնձի ժամանակ» իմաստը: Ի դեպ, հայերեն Աստվածաշնչի որոշ հատվածներում **ամարայնի** բառը «հունձ, հնձի ժամանակ» իմաստով է. «Եւ զտօն **ամարայնոյ** առաջնոյ արմտեաց քոց, արասցես զգործոց քոց» (Եւք. ԻԳ. 16): «Զաւակ գնողիցն իբրև զարդինս **ամարայնոյ** ամփոփելոյ վաճառականք ազգացն» (Եսայ. ԻԳ. 3): Սա անշուշտ հունարենի ազդեցություն է, կամ ավելի ճիշտ թարգմանիչների կողմից հունարեն համապատասխանակի միայն մեկ՝ «ամառ-ամառային» իմաստի իմացության արդյունք: Ռուսերեն թարգմանության մեջ եբրայական բնագրի համապատասխանակն է՝ «Наблюдай и праздник **жатвы** первых плодов труда твоего (Исход. 23. 16)»¹⁸:

Եթե, իրոք, **ամ** և **ամառն** բառերում նույն **ամ** «տարի, ժամանակ» բաղադրիչն է (վերջինիս մեջ մերժելի չէ և **ամա** հիմքային ձևի առկայությունը **ամա**–ոն – (ամա–րան), ապա, ինչպես նշել ենք, «տաք, շոգ» իմաստը ցայտուն չի

արտահայտված: Կարելի է ենթադրել, որ այդ իմաստը միջնորդավորված է, կամ նախագրային ինչ—որ շրջանում այն գիտակցվել է: Ամառն կազմության մեջ ամ— «ժամանակը» գիտակցվել է «տաք եղանակ, ժամանակ» նշանակությամբ:

Սլավոնական լեզուներում лето—ն ունի «տաք, տաքություն» իմաստը. слетный «տաք», որոշ բարբառներում **հարավ** իմաստը¹ թերևս դարձյալ կապվում է «շոգ», «ջերմություն» հասկացության հետ: Եմբադրելի է նաև, որ **ամառն**—ի «ժամանակ» իմաստը աղերսվում է օրացուցային տարին ամռանից սկսելու (հաշվելու) հետ:

Մի խոսքով, բառիմաստային, այլ լեզուների հետ առկա զուգահեռների և տրամաբանական փաստարկներով կարելի եզրակացնել, որ ամ և **ամառն** բառերում մույն արմատն է: Այս արմատն է թերևս և **Ամանակ** «ժամանակ» կազմության մեջ²: **Ամանակ**—ը ավելի ուշ կազմություն է, նվազ հաճախական և կազմվել է թերևս **ժամանակ**—ի համաբանությամբ³:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Բ. Թումանյան**, Հայ աստղագիտության պատմություն, հ. Ա—Բ, Ե. 1964, 1968: Նույնի Տոմարի պատմություն, Ե. 1972: **Ս. Բաղդյան**, Օրացույցի պատմություն, Ե., 1970: Է. **Աղայան**, Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Ե., 1986:
2. **Ամ** ծագում է հ.—ե. *sama—ից (տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան ամ բառահոդվածը: (Այսուհետև՝ Արմ.): Գ. Ջահուկյանը նշում է մույն արմատի sōma ձևը (Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 147): Հնթու «անցյալ տարի» հ.—ե. *peruti—ից:
3. Տե՛ս Նոր բառագիրը հայկազենան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1836, հ. 2, 1837: (Այսուհետև՝ ՆՀԲ)
4. Առձեռն բառարան հայկազենան լեզուի, Վենետիկ, 1865: (Այսուհետև՝ ԱԲ):
5. Տե՛ս Արմ. **Տարի** բառահոդվածը:
6. Նկատի ենք ունեցել հետևյալ գործերը: **Կտրին**. Վարք Մաշտոցի, Ե., 1941, **Եզնկայ Կտրացույ** Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց. Վենետիկ, 1826 (այսուհետև՝ Եզն.), **Ազարանգեղոս**. Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1909 (այսուհետև՝ Ազար.), **Փաւտոսի Բուզանդացույ**. Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883 (այսուհետև՝ Բուզ.), **Եղիշէի** Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ե., 1957 (այսուհետև՝ Եղիշ.), **Մովսիսի ռոմանացույ**, Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1913 (այսուհետև՝ որ.), **Ղազարայ Փարպեցույ**, Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1904 (այսուհետև՝ Փարպ.):
7. **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերպացույ**, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, **Գրիգոր Նարեկացի**, Մատենան ողբերգութեան, Պուճնոս Այրես, 1948: (Տվյալները քաղված են նշված գործերի համաբարբառներից):
8. **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 460, 470:
9. **Տարեգույն** «Գլուխ տարւոյ, կաղանդ» ՆՀԲ—ում վկայված օրինակ չկա, իսկ հղումը թերևս ուշ շրջանից է, գուցեև հետգրաբարյան փուլից:
10. **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ. էջ 411:
11. Տե՛ս Արմ. **Տարի** բառահոդվածը:
12. Նույն տեղում:
13. Библия. Книги священного писания Ветхого и Нового Завета, М., 1994:

14. Բարսեղ Կեսարացի. Յաղագս վեցարեայ արարչութեան. աշխատասիրությամբ Կիւ Մարտիանի. Ե., 1984. էջ 199-200:
15. Տեւ Արմ. Ամամն բառահոգովածը: Գ. Ջառուկյանը նշում է *sem արմատը (1987, 35), իսկ ամամն ձևի համար ենթադրում է *symrom (1987, 147):
16. Տեւ Основы иранского языкознания. Среднеперсидские языки, М., 1981, с. 173:
17. Տեւ И. Х. Дворецкий, Древнегреческо-русский словарь, т. I, М., 1958. с. 781:
18. Библия.
19. Фасмер, Этимологический словарь русского языка, т. II, М., 1986, с. 488:
20. Արմ-ում ամամակ-ը համարվում է իրանական փոխառություն, բայց փաստարկները համոզիչ չեն: Աճադյանը ենթադրում է պրո. amāna «ծամանակ» ձևից ավելացնելով «պարսկերենի մեջ այդպիսի բառ չկա, բայց կա «աման», «ծամանակ», որի հետ միասին հայերենի միջոցով ենթադրում են և amāna պիլ. amalak ձևը (տեւս Ամանակ բառահոգովածը):
21. Այդ մասին տեւս Լ. Հովհաննիսյան. Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 95:

Л. Ш. ОГАНЕСЯН

Выражение понятия ишрի "год" в древнеармянском языке

Резюме

В грабаре слова шм "год" и ишрի "год" проявляют ряд генетических, словообразовательных и функциональных особенностей.

Шм имеет и.-е. происхождение, а происхождение слова ишрի неясно. Шрի не употребляется как последний компонент слова, а шм выступает в слове и в начальной, и в конечной позиции. Ряд слов с шм-шмшпр (наименование божества, праздник), երկեամ "два года" - древнейшие образования, на основании сопоставления различных фактов предполагается, что шм "год, время" является корнем и в слове шмшпр "лето". Шм выступает, когда обозначается больше одного года, когда понятие ишрի "год" выражается порядковыми числительными, когда указывается возраст человека или время какого-либо события.

Шрի функционирует, в основном, в значении "календарный год, календарная единица".

L. Hovhannisyan

Representation of the concept „year” in Old Armenian

Summary

The words am „year” and tari „year” demonstrate a number of functional, morphological and genealogical features in Old Armenian (grabar).

Am is of Indo-European origin and the origin of tari is unknown. It is not actualized as a word-final component in grabar, while am may show both word-initial and word-final positions: a number of words, like amano „holiday, theonym”, yerkeam „two years” are ancient constructions. Facts prove the presense of the root am also in the word amar „summer”. Am is used

- a) when more than one years are mentioned
- b) when the concept „year” is indicated with ordinal numerals
- c) when somebody's age or a nevent is mentioned "tari" functions only in calendar meanings.